



## ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### ՈՐՈՇՈՒՄ

16 նոյեմբերի 2021 թվականի թիվ 182-Ս  
ք. Երևան

#### «ՀԻՔԲԻԴ ՓՐՈՂԱՔՇՆ ԷՆԴ ԴԻՍԹՐԻԲՅՈՒՇՆ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 54-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով «ՀԻՔԲԻԴ ՓՐՈՂԱՔՇՆ ԷՆԴ ԴԻՍԹՐԻԲՅՈՒՇՆ» ՍՊ ընկերության 2021 թվականի նոյեմբերի 8-ի տեսալսողական ծրագրի վերաբերյալ ծանուցումը և ի լրումն ծանուցման 2021 թվականի նոյեմբերի 11-ին ներկայացված տեսալսողական ծրագրում գովազդի առկայության վերաբերյալ գրությունը Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը *որոշում է*.

1. Հաստատել «ՀԻՔԲԻԴ ՓՐՈՂԱՔՇՆ ԷՆԴ ԴԻՍԹՐԻԲՅՈՒՇՆ» ՍՊ ընկերության տեսալսողական ծրագրի վերաբերյալ ծանուցումը՝ համաձայն Հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընկերությանը պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Տ. ՀԱԿՈՒԲՅԱՆ

Հավելված  
Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի  
2021 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 182-Ս որոշման

<b>Տեսալսողական ծրագրի անվանումը</b>	<b>Ժամկետը</b>
«Euronews»	պայմանագրի գործողության ժամկետով